

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/1

12 հունիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ Գևորգ Աստոյանի ՀՀ ԿԱ ՊԵԿ Արթիկի ՏՀՏ 05.04.2012թ. ուսումնասիրության արձանագրության վերաբերյալ 15.05.2012թ-ին բերված վարչական բողոքը, վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ վարչական բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արթիկի ՏՀՏ պետի 09.11.2011թ. թիվ 2201339 հանձնարարագրի համաձայն, Ա/Ձ Գևորգ Աստոյանի մոտ կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի հիմնավորվածության ուսումնասիրություն: Արդյունքում 05.04.2012թ-ին կազմվել է ուսումնասիրության արձանագրություն, որի դեմ Ա/Ձ Գևորգ Աստոյանի կողմից 15.05.2012թ-ին բերվել է վարչական բողոք: Որից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 08.06.2012թ-ի գրությամբ Ա/Ձ Գևորգ Աստոյանի լիազոր ներկայացուցիչը խնդրել է, որպեսզի Ա/Ձ Գևորգ Աստոյանի 15.05.2012թ-ի վարչական բողոքը թողնվի առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:


ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով գտնում է, որ Ա/Ձ Գևորգ Աստոյանի կողմից 15.05.2012թ-ին բերված վարչական բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Գևորգ Աստոյանի 15.05.2012թ-ի վարչական բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵԴՅԱՆ